

## Իռլանդական փիլիսոփայություն:

Կյանքում անհանգստանալու միայն երկու բան կա – կամ դուք առողջ էք, կամ՝ հիվանդ: Եթե դուք առողջ էք, ապա անհանգստանալու առիթ չկա: Բայց եթե դուք հիվանդ էք, ապա միայն երկու բանի մասին կարելի է անհանգստանալ՝ կամ դուք կառողջանաք, կամ՝ կմահանաք: Եթե դուք առողջանում էք, ապա անհանգստության ոչ մի առիթ չկա: Եթե դուք մահանում էք, ապա միայն երկու բանի մասին կարելի է անհանգստանալ՝ կամ դուք կընկնեք դրախտ, կամ՝ դժոխք: Եթե դուք ընկնում էք դրախտ, ապա անհանգստության ոչ մի առիթ չկա: Բայց եթե դուք ընկնում էք դժոխք, դուք այնքան զբաղված էք լինում ձեր հին ընկերներին բարեւելով, որ ժամանակ չեք ունենում ոչնչի մասին անհանգստանալու:

**Կյանքի դասեր Նոյյան Տապանից  
(անհայտ հեղինակ)**

1. Բաց մի թողեք նավը:
2. Հիշեք, որ մենք բոլորս նույն նավի վրա ենք:
3. Պլանավորեք ձեր ապագան - դեռևս անձրեւ չէր գալիս, երբ Նոյը կառուցեց իր տապանը:
4. Եղեք պատրաստ - վեց հարյուր տարեկանում ինչ որ մեկը կարող է ձեզ խնդրի ինչ որ կարելուր բան անել:
5. Մի լսեք քննադատներին: Պարզապես լծվեք այն գործին, որը պետք է կատարվի:
6. Կառուցեք ձեր ապագան ջրից բարձրադիր վայրում:
7. Անվտանգության համար ճանապարհորդեք զույգերով:
8. Արագությունը միշտ չէ որ առավելություն է - խիսունջները հեպարդների հետ էին նավի վրա:
9. Երբ դուք լարված էք, մի քիչ հանգչեք:

Հիշեք, որ Տապանը կառուցվել է դելիտանտների կողմից, իսկ Տիտանիկը՝ պրոֆեսիոնալների:

## Հին անգլիական աղոթք

Տուր մեզ, Տեր, մի քիչ արեւ,  
Մի քիչ էլ գործ ու զվարճանք,  
Տուր մեզ նաեւ մեր օրվա հաց, Ու մի քիչ կարագ,  
Որ կյանքի փորձանքներին դիմանանք  
Տուր առողջություն, որ մեր ապրուստը վաստակենք,  
Եւ մի քիչ ավելին, որ ուրիշներին օգնենք:

Տուր մեզ նաեւ վեպ ու գիրք,  
Եւ մի քիչ էլ երգ,  
որ մեր օրերը հետաքրքիր անցկացնենք:

Տուր մեզ, Աստված, հնարավորություն, որ լինենք բարի, քաջ, ազատ եւ  
իմաստուն,

մեր լավագույնը նվիրելու ուրիշներին,  
մինչեւ մարդիկ սովորեն ապրել եղբոր պէս միասին:  
Ամեն: